ԿՈՆԳՐԵՍԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ

Ստեղծելով Միավորված Ազգերի Կազմակերպությունը, աշխարհի ժողովուրդները մեծ հույսեր դրեցին նրա վրա։ Այդ հույսերից ամենամեծը՝ խաղաղության հույսն է։

Սակայն պատերազմը այսօր արդեն խախտել է որոշ ժողովուրդների խաղաղ կյանքը, իսկ վաղը սպառնում է խախտել ամբողջ մարդկության խաղաղ կյանքը։ Եթե Միավորված Ազգերի Կազմակերպությունը չի արդարացնում այն գլխավոր հույսը, որ նրա վրա դնում էին ինչպես իրենց կառավարությունների կողմից նրանում ներկայացված, այնպես էլ դեռևս չներկայացված՝ աշխարհի բոլոր ժողովուրդները, եթե Միավորված Ազգերի Կազմակերպությունը հանգստություն ու խաղաղություն չի ապահովում մարդկության համար, ապա դա տեղի է ունենում, որովհետև նա ընկել է այն ուժերի ազդեցության տակ, որոնք արհամարհել են ընդհանուր խաղաղության միակ հնարավոր ուղին՝ ընդհանուր համաձայնություն որոնելը։

Եթե Միավորված Ազգերի Կազմակերպությունն ուզում է արդարացնել այն հույսերը, որ մարդկությունը դեռևս դնում է նրա վրա, նա պետք է վերադառնա այն ուղին, որ ժողովուրդները նախագծել էին նրա կազմակերպման օրից և այդ ուղիով որպես առաջին քայլ ապահովել հինգ մեծ տերությունների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Սովետական Միության, Անգլիայի ու Չինական Ժողովրդական ռեսպուբլիկայի կոնֆերանսի շուտափույթ հրավիրումը՝ եղած տարաձայնությունների քննարկման և խաղաղ կարգավորման համար։

Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային երկրորդ կոնգրեսը, որը կազմված է 80 երկրների դելեգատներից և ներկայացնում է խաղաղասեր մարդկության իսկական ձայնը, պնդում է, որպեսզի Միավորված Ազգերի Կազմակերպությունը և Օրենսդիր օրգանները, որոնց առաջ պատասխանատու են զանազան երկրների կառավարությունները, անհապաղ քննարկեն հետևյալ առաջարկները, որոնք նպատակ ունեն վերականգնել ու պահպանել խաղաղությունը, վերականգնել ու պահպանել վստահությունը բոլոր երկրների միջև՝ անկախ նրանց սոցիալական սիստեմներից։

1. Անհանգստացած այն բանով, որ Կորեայում այժմ տեղի ունեցող պատերազմը ոչ միայն անհամար աղետներ է բերում կորեական ժողովրդին, այլև սպառնում է վերաճել համաշխարհային նոր պատերազմի, մենք պնդում ենք դադարեցնել այդ պատերազմը, Կորեայից դուրս բերել օտարերկրյա զորքերը և Կորեայի երկու մասերի միջև ներքին կոնֆլիկտը խաղաղ կարգավորել՝ կորեական ժողովրդի ներկայացուցիչների մասնակցությամբ։ Մենք պնդում ենք, որպեսզի այդ հարցը լուծվի Անվտանգության Խորհրդի կողմից՝ նրա լրիվ կազմով, ներառյալ Չինական Ժողովրդական ռեսպուբլիկայի ներկայացուցիչներին։ Մենք կոչ ենք անում դադարեցնել ամերիկյան զորքերի ինտերվենցիան Տայվան (Ֆորմոզա) չինական կղզում և Վյետնամի Ռեսպուբլիկայի դեմ ուղղված պատերազմական գործողությունները, որոնք նույնպես համաշխարհային պատերազմի սպառնալիք են պարունակում։

2. Մենք վճռականապես դատապարտում ենք ամեն տեսակ փորձերն ու միջոցառումները, որ ընդունվում են ի խախտումն Գերմանիայի ու Ճապոնիայի վերառազմականացումն արգելող միջազգային համաձայնագրերի։ Այդ փորձերն ու միջոցառումներն ամենալուրջ սպառնալիք են ներկայացնում խաղաղության գործի նկատմամբ։ Մենք համառորեն պահանջում ենք հաշտության պայմանագիր կնքել միավորված ու ապառազմականացված Գերմանիայի, ինչպես և Ճապոնիայի հետ, և այդ երկու երկրներից դուրս բերել օկուպացիոն զորքերը։

3. Ժողովուրդներին կախյալ վիճակում ու գաղութային ճնշման տակ պահելու բռնի փորձերը մենք դիտում ենք որպես սպառնալիք խաղաղության գործի նկատմամբ և հռչակում ենք այդ ժողովուրդների ազատության ու անկախության իրավունքները։ Մենք արտահայտվում ենք ռասայական խտրականության բոլոր ձևերի դեմ, որովհետև դրանք թշնամություն են առաջ բերում ժողովուրդների միջև և նույնպես սպառնալիք են ներկայացնում խաղաղության նկատմամբ։

4. Մենք անհրաժեշտ ենք համարում մերկացնել ագրեսորի փորձերը՝ խճճելու բուն այն հասկացողությունը, թե ինչ բան է ագրեսիան և այդպիսով առիթ տալու այլ երկրների ներքին գործերին օտարերկրյա միջամտության համար։

Քաղաքական, ստրատեգիական ու տնտեսական ոչ մի նկատառում, այս կամ այն պետության ներքին դրության կամ ներքին կոնֆլիկտների հետ կապված ոչ

մի շարժառիթ չեն կարող արդարացում հանդիսանալ այլ պետության գործերին որևէ պետության զինված միջամտության համար։ Ագրեսիան հանցավոր ակտ է այն պետության կողմից, որը առաջինն է զինված ուժ գործադրում մի այլ պետության դեմ՝ ինչպիսի պատրվակով էլ որ լինի։

5. Մենք դատում ենք, որ նոր պատերազմի պրոպագանդան մեծագույն սպառնալիք է ստեղծում ժողովուրդների խաղաղ համագործակցության համար և մեկն է մարդկության դեմ ուղղված ամենածանր հանցագործություններից։

Մենք դիմում ենք բոլոր երկրների պառլամենտներին՝ կոչ անելով, որպեսզի նրանք ընդունեն խաղաղության պահպանման վերաբերյալ օրենք, որը քրեական պատասխանատվություն նախատեսի նոր պատերազմի պրոպագանդայի համար՝ ինչ ձևով էլ այն մղվի։

6. Բոլոր ազնիվ մարդիկ, անկախ իրենց քաղաքական համոզմունքներից, քաղաքացիական բնակչության մասսայական անխնա ոչնչացումը համարում են մարդկության դեմ ուղղված հանցագործություն։ Մենք պահանջում ենք, որպեսզի միջազգային մի հեղինակավոր հանձնաժողով քննարկի Կորեայում կատարված հանցագործությունները և, մասնավորապես, գեներալ Մակարտուրի պատասխանատվության հարցը։

7. Արտահայտելով ռազմական բյուջեների ծանր բեռը իրենց ուսերի վրա կրող ժողովուրդների կենսական պահանջները, ցանկանալով ամբողջ մարդկության համար ապահովել կայուն ու երկարատև խաղաղություն, մենք Միավորված Ազգերի Կազմակերպության, պառլամենտների ու ժողովուրդների քննարկմանն ենք հանձնում հետևյալ առաջարկները.

— Անպայման արգելել ատոմային, բակտերիոլոգիական, քիմիական զենքի բոլոր տեսակները, թունավոր նյութերը, մասսայական ոչնչացման ռադիոակտիվ և մյուս բոլոր միջոցները։

— Պատերազմի հանցագործ հայտարարել այն կառավարությունը, որն առաջինը կգործադրի դրանք։

Համաշխարհային երկրորդ կոնգրեսը, դիտակցելով ժողովուրդների առաջ իր պատասխանատվությունը, հանդիսավոր կոչով դիմում է նաև մեծ տերություններին և առաջարկում է նրանց 1951—1952 թվականների ընթացքում կատարել ցամաքային, օդային և ռազմա-ծովային բոլոր զինված ուժերի պրոգրեսիվ, միաժամանակյա ու համեմատական կրճատում՝ մեկ երրորդից մինչև կեսի սահմաններում։

Այդպիսի միջոցառումը վճռական սահման կդնի սպառազինությունների մրցավազքին և կնվազեցնի ագրեսիայի վտանգը։ Նա կօգնի թեթևացնել պետությունների ռազմական բյուջեները, որոնք ծանրանում են ժողովրդի բոլոր խավերի վրա։ Նա կօգնի նաև միջազգային վստահության վերականգնմանը և բոլոր պետությունների միջև անհրաժեշտ համագործակցությանը՝ ինչպիսին էլ լինի նրանց կարգը։

Կոնգրեսը հայտարարում է, որ ատոմային զենքի ու մարդկանց մասսայական ոչնչացման զենքի այլ տեսակների արգելման նկատմամբ, ինչպես նաև սովորական սպառազինության ու սպառազինությունների կրճատման նկատմամբ վերահսկողությունը տեխնիկապես իրագործելի է։

—Անվտանգության խորհրդին առընթեր պետք է ստեղծվի հեղինակավոր տեսչություն ունեցող միջազգային վերահսկիչ օրգան։ Այդ օրգանի պարտականությունը պետք է լինի վերահսկել ինչպես սպառազինությունների կրճատումը, այնպես էլ ատոմային, բակտերիոլոգիական, քիմիական ու մասսայական ոչնչացման զենքի այլ տեսակների արգելման իրագործումը։

Որպեսզի այդ վերահսկողությունը ազդեցիկ լինի, նա պետք է վերաբերի ոչ միայն յուրաքանչյուր երկրի կողմից հայտարարված ռազմական ուժերին, գոյություն ունեցող սպառազինությանն ու զենքի արտադրությանը, այլև միջազգային վերահսկիչ հանձնաժողովի պահանջով, հայտարարվածից բացի, նա պետք է ընդգրկվի ենթադրվող ռազմական ուժերի, գոյություն ունեցող սպառազինության ու զենքի արտադրության ստուգման գործում։

Զինված ուժերի կրճատման վերաբերյալ այս առաջարկները առաջին փուլն են ընդհանուր ու լիակատար զինաթափման ճանապարհին, որը հանդիսանում է խաղաղության կողմնակիցների վերջնական նպատակը։

Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային երկրորդ կոնգրեսը համոզմունք է հայտնում, որ սպառազինությունների մրցավազքի միջոցով ուժերի հավասարակշռություն որոնելով խաղաղությունը չի կարող երաշխավորվել։ Կոնգրեսը հաստատում է, որ իր կողմից առաջարկվող միջոցառումները ռազմական ոչ մի առավելություն չեն տա այս կամ այն երկրին, որ դրանք անվիճելիո-

ռեն կկանխեն պատերազմը, կապահովեն անվտանգությունը և կբարձրացնեն աշխարհի բոլոր ժողովուրդների բարեկեցությունը։

8. Մենք ուշադրություն ենք հրավիրում այն բանի վրա, որ մի շարք երկրների կողմից ռազմական էկոնոմիկայի անցնելն ավելի և ավելի ուժեղ կերպով է խախտում երկրների միջև տնտեսական կապը և ինչպես հումքի, այնպես էլ արդյունաբերության արտադրանքի փոխանակումը կործանարար ազդեցություն է թողնում շատ ժողովուրդների կենսամակարդակի վրա, արգելակում է տնտեսական պրոգրեսն ու գործարար համագործակցությունը բոլոր երկրների միջև և վերջին հաշվով խաղաղության գործի նկատմամբ սպառնալիք ներկայացնող կոնֆլիկտների աղբյուր է հանդիսանում։ Ելնելով բոլոր երկրների բնակչության կենսական շահերից, ձգտելով առողջացնել միջազգային իրադրությունը, մենք առաջարկում ենք վերականգնել տարբեր երկրների միջև առևտրական նորմալ հարաբերությունները՝ փոխադարձաբար օգտավետ պայմաններով, որոնք ապահովեն ժողովուրդների պահանջները, բացառեն տնտեսական խտրականությունը իր բոլոր արտահայտություններով, ապահովեն ազգային էկոնոմիկայի զարգացումն ու մեծ և փոքր պետությունների տնտեսական զարգացումը։

9. Գտնելով, որ ժողովուրդների միջև կուլտուրական կապերի խախտումը նրանց անջատում է իրարից, առաջ է բերում փոխըմբռնման կորուստ, ստեղծում է փոխադարձ անվստահության իրադրություն ու նպաստում է պատերազմի պրոպագանդային և որ, մյուս կողմից, ժողովուրդների միջև կուլտուրական կապերի ամրապնդումը պայմաններ է ստեղծում հանուն խաղաղության մղվող ընդհանուր պայքարում փոխըմբռնման ու վստահության համար, մենք դիմում ենք բոլոր կառավարություններին՝ կոչ անելով նպաստել ժողովուրդների միջև կուլտուրական կապերի բարելավմանը, ժողովուրդների կուլտուրական վիճակի փոխադարձ ուսումնասիրմանը։ Մենք առաջարկում ենք նպաստել կուլտուրայի գործիչների միջազգային կոնֆերանսների կազմակերպմանը, նրանց կողմից այլ երկրները այցելելուն, այլ երկրների գրականության լայն հրատարակմանն ու նրանց արվեստի հետ ծանոթանալուն։

10. Միավորված Ազգերի Կազմակերպությանը կոչ անելով արդարացնել այն հույսերը, որ ժողովուրդները դրել են նրա վրա, նրան հայտնում ենք ի գիտություն, որ մենք հիմնել ենք Խաղաղության Համաշխարհային Խորհուրդ, որը կհանդիսանա ներկայացուցչական օրգան՝ իր կազմում ունենալով աշխարհի բոլոր ժողովուրդների, ինչպես Միավորված Ազգերի Կազմակերպության մեջ մտնող, այնպես էլ այնտեղ չներկայացված երկրների ժողովուրդների ներկայացուցիչներին, ներառյալ նաև այն երկրների ժողովուրդները, որոնք այժմ դեռևս կախյալ և գաղութային երկրներ են։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը Միավորված Ազգերի Կազմակերպությանը կոչ կանի գործնականում կատարել բոլոր երկրների միջև խաղաղ համագործակցության ամրապնդման ու զարգացման գծով իր ստանձնած պարտավորությունները։ Նա իր վրա կվերցնի մի վսեմ խնդիր՝ ապահովելու կայուն ու երկարատև խաղաղությունը, որը համապատասխանում է բոլոր ժողովուրդների կենսական շահերին։ Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը վստահություն կներշնչի մարդկությանը, որ հակառակ գոյություն ունեցող դժվարություններին, որոնք չի կարելի թերագնահատել, նա կկատարի իր ստանձնած միսիան։

ԿՈՆԳՐԵՍԻ ԲԱՆԱՁԵՎԸ ՌԵՊՐԵՍԻԱՆԵՐԻ ԶՈՀԵՐԻ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շատ երկրներում խաղաղության կողմնակիցները ներկայումս ենթարկվում են ոստիկանական հալածանքների։

Լատինական Ամերիկայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում, Աֆրիկայի ու Մերձավոր Արևելքի զանազան երկրներում խաղաղության հազարավոր կողմնակիցներ բանտարկված են։

Նրանցից շատերը, ովքեր ընտրվել էին այս կոնգրեսի դելեգատներ, չեն կարող ներկա լինել նրան։

Խաղաղության պաշտպանության ժողովներն արգելված են։ Ոստիկանությունը կրակում է խաղաղության կողմնակիցների վրա, ծեծի է ենթարկում նրանց։

Հալածանքներից չեն խուսափել նաև գիտնականները։

Խաղաղության Համաշխարհային երկրորդ կոնգրեսը ողջունում է ոստիկանական տե-